Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
մայիսի 4-ի N 452 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
նոյեմբերի 8-ի N 1419 - Ն որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ գրասենյակ) Հայաստանի Հանրապետությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկումը կազմակերպում է գրասենյակի հետ պայմանագիր կնքած իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի միջոցով: Սույն կետում նշված պայմանագրի ձևը հաստատում է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ):

Հայաստանի Հանրապետությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկում իրականացնելու համար գրասենյակի հետ պայմանագիր կնքած իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի աշխատողները պետք է համապատասխանեն խորհրդի կողմից սահմանված որակավորման միևնույն չափանիշներին:

Սույն կետում նշված պայմանագրում ամրագրվում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկում իրականացնող յուրաքանչյուր աշխատողի համար սպասարկվող հսկիչ-դրամարկղային մեքենաների առավելագույն թիվը սահմանվում է 500 միավոր հսկիչ-դրամարկղային մեքենա:

Հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման կազմակերպման համար գրասենյակը, պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից յուրաքանչյուր ամիս կարող է գանձել միջնորդավճար՝ խորհրդի կողմից հաստատված չափով: Ընդ որում, պայմանագրով միջնորդավճար նախատեսված լինելու դեպքում միջնորդավճարը գանձվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկում իրականացնող բոլոր իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից՝ միևնույն չափով:

II. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

3. Գրասենյակը հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման կազմակերպման համար վարում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գրանցամատյան (այսուհետ՝ գրանցամատյան):

4. Սույն ընթացակարգի 3-րդ կետում նշված գրանցամատյանում գրանցվելու համար իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը գրասենյակ են ներկայացնում դիմում, որտեղ պարտադիր լրացվում են հարկ վճարողի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), ՀՎՀՀ-ն, հարկ վճարողի գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչության անվանումը:

5. Գրասենյակն իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ստացված դիմումների հիման վրա նրանց հետ պայմանագիրը կնքում է դիմումներն ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Դիմումը թերի ներկայացվելու դեպքում այն վերադարձվում է իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը՝ թերությունները վերացնելու համար:

III. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՈՒՄԸ

7. Գրանցամատյանում գրանցվում են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դիմումներում նշված պարտադիր տվյալները:

8. Հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկում կարող են իրականացնել գրանցամատյանում գրանցված իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների միջոցով:

9. Գրանցամատյանում գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասին գրասենյակի տրամադրած տվյալները տեղադրվում են հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

10. Գրանցամատյանում գրանցված իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը գրասենյակին են տրամադրում նախորդ ամսվա ընթացքում հարկ վճարողների հետ կնքված և լուծված պայմանագրերի մասին տեղեկատվություն՝ խորհրդի կողմից հաստատված ձևաչափով:

IV. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՀԱՆԵԼԸ

11. Գրանցամատյանում գրանցված իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը խորհրդի որոշմամբ հանվում է գրանցամատյանից, եթե՝

1) խախտվել են գրասենյակի հետ կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունները.

2) իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացվել է գրանցումից հանելու մասին դիմում:

V. ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԸ

12. Հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման գների առավելագույն չափերը չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 1419-Ն որոշման 5.1-ին կետով հաստատված գների համապատասխան չափերը։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ